

## ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Ոչ մէկ ընկրկում Մելգոնեանցիներու կողմէ՝ փրկելու համար իրենց Մայր Հաստատութիւնը

### Գրեց Կարօ Գասապեան

Ինչպէս ծանօթ է, Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը **AGBU** ի Կեդրոնական Վարչութեան որոշումով **2005-ի** Յունիսին վերջնականապէս պիտի փակէ իր դռները Լուծարքի պիտի ենդարկուի Սփիւռքի ամէնէն նշանաւոր կրթօճախը, Հայ մշակոյթի եւ դպրութեան դարբնոցը: Ուրեմն, Կեդրոնական Վարչութիւնը որոշած է քայքայել եւ պատմութեան գիրկը նետել անմահ բարերարներ՝ Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան եղբայրներու Հայ Ազգին ժառանգ ձգած ութսունամեայ անզուգական Հաստատութիւնը:

Մելգոնեանցիներ, աշխարհի չորս կողմերէն, մէկ մարդու նման ոտքի ելած՝ կը շարունակեն իրենց պայքարը ի գին ամէն զոհողութեան, որպէսզի **AGBU** ն սիանգամ ընդմիջտ հրաժարի հայատրոբ կեդրոն սը կազմալուծելու եւ կալուածները ծախելու ազգավնաս այս ծրագիրէն:

Մելգոնեան Սանուց Միութիւններու տարած անխոնջ եւ անդուլ աշխատանքներուն ակնարկելով՝ **AGBU**ի նախագահը, Պրն. Պերճ Սեդրաքեան, ինքզինքը կը մխիթարէր անցեալ Մարտ **15** ին հրապարակ նետած կարճ ու կտրուկ, բայց սիաժամանակ այնքան պերճախօս, հետեւեալ յայտարարութեամբ. **"Sooner or later they will get tired!"** ( Ուշ կամ կանուխ պիտի ընկրկին..) Ահաասիկ ամիսներ անցած են

Մելգոնեանցիներ ամենուրեք ոչ մէկ յոգնութեան եւ ընկրկումի նշաններ ցոյց կուտան: Այդ կը վկայեն աշխարհացոյի Մելգոնեան Սանուց Միութիւններու աշխատանքները ու զանազան ձեռնարկները, Լոս Անկէլըս, Լոնտոն, Պէյրութ, Թորոնթօ, Մոնդրիալ, Նիկոսիա, Երեւան, Աւստրալիա, եւայլն

Արդարեւ **AGBU** Ի որոշումին դէմ ընդիմութիւնը համահայկական բնոյթ ունենալով հանդերձ կը յատկանշուի նաեւ Կիպրոսի բարեխնամ կառավարութեան հաստատ դիրքորոշումով որ կը միտի Մելգոնեան Տաստատութեան շարունակութիւնը ապահովելու Կիպրոսի մէջ, անշեղօրէն թեւ ու թիկունք կանգնելով կիպրահայ գաղութին եւ Մելգոնեանցիներուն պայքարին:

Անցեալ ամիս, Երեւանի մէջ, Կիպրոսի ներկայացուցիչներու Պալատի նախագահ Դիմիդրիոս Քրիատոֆիասը նշեց հետեւեալը.-“ Ինչպէս Կիպրոսի Կառավարութիւնը, նոյնպէս եւ խորհրդարանն ու Տայ համայնքի ներկայացուցիչները շատ մեծ պայքար կը մղեն այդ վարժարանի գործունէութիւնը շարունակելու համար: Մելգոնեան վարժարանը հայկական կեդրոն է կիպրոսի մէջ, ինչպէս եւ մեր մշակոյթի մէկ մասը: Ճիշտ այդ պատճառով ալ կը ցանկանք զայն ամէն կերպ պահպանել: Բայց ցաւոք, այն մարդիկը որոնք պէտք է որոշեն, տակաւին ոչ մէկ դրական որոշումի չեն հանգած: Ուրեմն դեռ յաջողութեան չենք հասած: Բայց կը շարունակենք մեր պայքարը:” (“Տայոց Աշխարհ” 20 Հոկտ. 2004): Այո, պայքարը կը շարունակենք: Մելգոնեանը պէտք չէ որ փակուի եւ ոչ մէկ յոգնութիւն եւ ընկրկում՝ այդ պայքարի ճամբուն վրայ...: Այդ կը վկայէ Հոկտ. 30, 2004, Լոս Անկէլըսի Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ

կազմակերպութեան դրամահաւաքի ձեռնարկը Կլէնտլի **Brandview Collection** Ի սրահներուն մէջ, որ յաջող եւ արդիւնաւէտ իրագործում մը եղաւ:

Ճաշկերոյթ պարահանդէսին մասնակցող Հիւրերը լսեցին Սանուցի Ատենապետ՝ Ռաֆֆի Յինժալեանի Զեկոյցը նորակազմ Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ ոչ-հասութաբեր կազմակերպութեան մասին, որուն նպատակն է դէմ կենալ եւ կասեցնել ծրագրուած փակումը կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Ռաֆֆի Յինժալեան նկատել տուաւ այն իրողութիւնը թէ՛ մինչեւ հիմա հաստատութիւնը պահպանելու մասին հանրութեան եւ անհատներու բոլոր կոչերը անտեսուած են **AGBU** Ի կողմէ: Ատոր համար է որ Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ կազմակերպութիւնը վարձած է Լոս Անկէլըսի մէջ **MacCarley & Rosen, PLC** իրաւաբանական ընկերութիւնը, որպէսզի իրաւական գետնի վրայ հետապնդուի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը գալիք սերունդներուն համար բաց պահելու անհրաժեշտութիւնը:

Այս ձեռնարկին պատույ հիւրն էր ծանօթ ազգային Պրն Նիգ Նշանեան, որ Զօհրապ Շամմասեանի կողմէ ներկայացուեցաւ որպէս Մելգոնեանի զօրաւիգ եւ Մելգոնեանցիներու սրտցաւ բարեկամ յիշելով իր ազգային եւ կրթական մարզերու մէջ անցեալին բերած իր ազգանուէր մասնակցութիւնը: Պրն. Նիգ Նշանեան, որպէս հայ մշակոյթի եւ հայեցի դաստիարակութեան պահպանմամբ շահագրգիռ անձնատրութիւն, իր խօսքով յորդորեց ներկաները եւ բոլոր Մելգոնեանցիները՝ Միահամուռ եւ աննկուն կամքով պայքարելու, որպէսզի վառ մնայ Մելգոնեանի ջահը համայն հայութեան համար: “Ամօթ, Հ.Բ.Ը.Մ. Ի նման մեծ կազմակերպութեան

որ լծուած է հայ դպրոց փակելու անփառունակ գործին”։ Ըստ ան: Ապա, օրինակելի շեշտով մը, Պրն Նշանեան իր մասնակցութիւնը բերաւ դրամահաւաքի արշաւին, **\$5,000** տուլար չէք մը յանձնելով Ատենապետ Պրն. Բաֆֆի Յինձալեանին: Պրն Նշանեանի այս սրտաբոլի նուիրատուութիւնը արժանացաւ բոլոր ներկաներուն ջերմ գնահատանքին եւ երկարատեւ ծափահարութեան: Կարծէ հոս յիշել, որ այդ գիշերուան հանգանակութենէն գոյացած գումարը հասաւ **\$30,000** տուլարի:

Ժիրայր Մակարեանի արհեստավարժ մակարդակով կատարած նկարահանումները որոնք բազմաթիւ տեսարաններ եւ անձնատրութիւններ կը ներկայացնեն այդ հանդիսութենէն, այժմ կարելի է դիտել համացանցի **www.melkonianforever.Org** կայքէջի վրայ: Մասնաւոր շնորհակալութիւններ ժիրայրին՝ սոյն կայքէջի համար կատարած իր աշխատանքներուն:

Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ կազմակերպութիւնը կոչ կուղղէ Նաստատութեան շրջանաւարտներուն, նաեւ հայ կազմակերպութիւններուն եւ անհատներուն որպէսզի բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ զօրաւիգ կանգնին Մելգոնեանցիներուն պայքարին, որ կը նպատակադրէ անէացումէ փրկել Մելքոնեան Կրթական Նաստատութիւնը, Կիպրոսի մէջ:

Կարօ Գասապեան  
**Northridge, California**  
Նեռ. 818 718 9434  
Նոյեմբեր 12, 2004